

## **МЕТОДИКА СТАТИСТИЧЕСКОЙ ОБРАБОТКИ РЕЗУЛЬТАТОВ КОМПЬЮТЕРНОГО ТЕСТИРОВАНИЯ**

**G. A. МЕЛИКЯН**

Приведена методика статистической обработки результатов компьютерного тестирования, которая основана на понятии "Матрицы тестовых результатов". Данная методика может быть использована при разработке и проверке базы тестовых заданий.

## **METHODS OF STATISTICAL ANALYSIS OF THE RESULTS OF COMPUTER TESTING**

**H. A. MELIQYAN**

The methods of statistical analysis of the results of computer testing, which is based on the concept of "The Matrix test results": This technique can be used to develop and test a database of test items.

# **ՊԱՐԶԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԿԱՐԳՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**Ա. Զ. ՀԱԿՈԲՅԱՆ**

*Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր,*

*Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի դասախոս*

**Ծ. Գ. ԲԱՂՋԱՆՅԱՆ**

*Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի լաբորատոր*

Համակարգիչ օգտագործողներից շատերը գործ են ուենում տարատեսակ ծրագրերի հետ: Այդ ծրագրերի շրջանում մեծ տեղ է զբաղեցնում MS Office-ը: MS Office-ի մեջ մտնում են հետևյալ հիմնական ծրագրերը. MS Word, որը հիմնականում նախատեսված է տեքստերի խմբագրման, սրբագրման, տվյալների ներմուծման համար, MS Excel-ը օգտագործում են բյուջետային և ֆինանսական հաշվարկների համար, քանի որ այն հաշվապահական ծրագիր է, որի օգնությամբ բյուջետային և ֆինանսական հաշվարկները ավելի դյուրին և արագ են ստացվում:

Պատահական չէ, որ փաստաթղթերի գրագետ ստեղծման առումով Word-ը աշխարհում համարվում է ամենաարագ և ամենահայտնի ծրագիրը: Ի տարբերություն MS Word-ի, MS Excel-ը թվերի օգնությամբ կատարում է այն ամենը, ինչը Word-ը՝ տառերի օգնությամբ:

MS Access ծրագիրը, ի տարբերություն վերը նշված երկու ծրագրերի, իրենից ներկայացնում է տվյալների վերահսկման բավականին հզոր մի ծրագիր, որը հիմնականում նախատեսված է ծրագրավորողների համար: MS Access հանդիպում է միայն MS Office մասնագիտական տարբերակի թողարկման մեջ: MS

Office փաթեթի մեջ իր առանձնահատուկ տեղը ունի նաև PowerPoint-ը:

PowerPoint-ը հիմնականում օգտագործում են համակարգչային շնորհանդեսներ ստեղծելու, խմբագրելու և ցուցադրելու համար: Սակայն PowerPoint-ը կիրավուում է ոչ միայն զուտ համակարգչային շնորհանդեսների ստեղծման և ցուցադրման համար, այլև Web էջեր պատրաստելու և Internet-ում տեղադրեթելու համար<sup>1</sup>:

PowerPoint-ը իրենից ներկայացնում է բավականին բազմածավալուն և բազմաֆունկցիոնալ ծրագիր, որը նախատեսված է համակարգչային բազմաօգտագործման միջավայրում տարատեսակ ֆունկցիաների կատարման՝ շնորհանդեսներ ստեղծելու և դրանց օգնությամբ դրանում ներառված ինֆորմացիայի ցուցադրաման համար:

Դարձ է հատկապես ուշադրություն դարձնել PowerPoint-ի օգտագործման վրա, քանի որ դրա շահագործումը օգտագործողի առաջ կարող է մի շարք առանձնահատուկ խնդիրներ առաջացնել: Միշտ անհրաժեշտություն է առաջանում ինչ-որ մի բան փոփոխել ծրագրի տեքստում, որպեսզի PowerPoint-ը ճիշտ աշխատի նոր տարրերակում:

Microsoft ընկերությունը էֆեկտիվորեն ներկայացնում է PowerPoint-ի ֆունկցիաները ինտերնետում աշխատելու համար: Ֆունկցիաները, որոնք առաջարկվում են Microsoft ընկերության PowerPoint ծրագիրը աշխատացնելու ընթացքում, նախատեսված են նաև Web էջերի ստեղծման համար, որը, սակայն, համակարգչային բավականին բարդ շնորհանդես է իրենից ներկայացնում:

PowerPoint-ը այնպիսի ծրագիր է, որ հենց ստեղծված է բազմապիսի (սկսած պարզագույն, վերջացրած ամենաբարդ) շնորհանդեսների ստեղծման և ցուցադրման համար, որում տվյալների բազայի ֆայլերը հանդիսանում են կարևոր տարրեր շնորհանդեսների ստեղծման, պահպանման, խմբագրման և ցուցադրման համար:

Պարզագույն համակարգչային շնորհանդեսներ ստեղծելու համար նախ և առաջ պետք է ունենալ տվյալների բազա, կարողանալ օգտվել համակարգչային պարզագույն տեխնոլոգիաներից և հետևել այն հրահանգներին կամ հաջորդ թիվ քայլին, որի հիման վրա պետք է կատարել համապատասխան գործողությունը: Տվյալների բազան, որը հանդիսանում է պարզագույն շնորհանդեսների ստեղծման և ցուցադրման անբաժանելի մասը, պահպում է մեկ ֆայլում:

Չնայած այն հանգամանքին, որ PowerPoint-ը հանդիսանում է ոչ այնքան բարդ համակարգ պարզագույն շնորհանդեսների ստեղծման, պահպանման և փաթեթավորման տեսանկյունից, այնուհանդերձ, նրա օգտագործումը հնարավոր է նաև ոչ պորֆեսիոնալների կողմից:

Տվյալների բազան հանդիսանում է պարզագույն շնորհանդեսների ստեղծման հիմքը, քանի որ հենց նրա միջոցով են իրականացվում նոր շնորհանդեսների ստեղծման և ցուցադրման գործողությունները: PowerPoint-ը ինտերակտիվ համակարգչային ծրագիր է՝ նախատեսված Windows-ի համար:

Վերը ասվածից երևում է, որ PowerPoint-ը մի ծրագիր է, որի օգնությամբ, պարզագույն համակարգչային շնորհանդեսների ստեղծման և ցուցադրման ժամանակ, հնարավորություն է ընձեռնվում պահել և օգտագործել այդ շնորհանդե-

<sup>1</sup> Microsoft PowerPoint, Getting Started. Microsoft Corporation, 1994.

սը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է այն ստեղծվել, խմբագրվել և պահպանվել, անհարժեշտ գիտելիքներ կուտակել ավելի բարդ շնորհանդեսների ստեղծման և ցուցադրման համար:

PowerPoint-ով պարզագույն համակարգչային շնորհանդեսներ ստեղծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է աշխատեցնել այդ ծրագիրը:

Ծրագրի աշխատացումը պետք է սկսել նոր մաքուր էջի ընտրությունից, որի վրա էլ պետք է կատարվեն հիմնական գործողությունները:

Մաքուր էջ ընտրելուց հետո պետք է ընտրել այն գունային գամման, որով կցանկանանք ներկայանար շնորհանդեսը ցուցադրելու ընթացքում: Պարզագույն համակարգչային շնորհանդեսը կարող է բաղկացած լինել մեկից մինչև մի քանի հայրուր էջ պարունակող ցուցադրումներից: Համապատասխան գունային գամմա ընտերլով ձեր շնորհանդեսի համար, կարող եք ընտրել նաև համապատասխան ծևավորում ունեցող շաբլոն: Այդ շաբլոնը կարող եք ընտրել Design Template մենյուի պատուհանից: Design Template-ում պարունակվող շաբլոնները տարատեսակ գունավորում ունեն, սակայն ձեր ցանկությամբ դուք կարող եք փոխել դրա գունավորումը՝ գույների շաբրից ընտրելով այն գույնը, որը ավելի հոգեհարազատ է ձեզ կամ ավելի է համապատասխանում շնորհանդեսին: Շնորհանդեսի համապատասխան էջի շաբլոնի գունափոխման համար անհրաժեշտ է մենյուների պահարաննին ընտրել Background գործողությունը, բերված պահարանից ընտրել ցանկացած գույնը կամ գունային համապատասխան էֆեկտը և հաստատել այդ գործողության կատարումը<sup>2</sup>:

Համակարգչային պարզագույն շնորհանդեսի համար համապատասխան գունային գամմա և շաբլոն ընտրելուց հետո կարող ենք արդեն սկսել աշխատել յուրաքանչյուր էջի վրա:

Պարզագույն շնորհանդեսի ամեն մի էջ իր մեջ որոշակի ինֆորմացիա պետք է պարունակի այն ամենի մասին, ինչը ցանկանում ենք ներկայացնել հենց PowerPoint-ի օգնությամբ:

Յուրաքանչյուր էջում կարող ենք գետեղել համապատասխան բովանդակություն պարունակող որևէ տեսքություն, բառակապակցություն: Դրա համար անհրաժեշտ է մկնիկի օգնությամբ կանգնել էջի այն հատվածում, որտեղ պետք է նույտքագրի տեքստը, մկնիկի աջ կողմին մեկ անգամ հարվածելուց հետո սկսել նույտքագրել այն ամենը, ինչ ցանկանում ենք: Կարող ենք նույտքագրել նաև արդեն պատրաստի նյութ, եթե, իհարկե, այն պահպան է տվյալ համակարգչի տվյալների բազայում:

Սույն պահպանը տեքստին ևս կարող ենք համապատասխան գունավորում տալ՝ այնպիսի գունային գամմա ընտրելով, որը ավելի շատ կիամապատասխանի տվյալ էջի շաբլոնի գունավորման և ծևավորման հետ: Slide Show մենյուից կարող ենք ընտրել Custom Animation գործողությունը՝ նույտքագրած տեսքը, այսպես ասած, կենդանացնելու համար:

Բացի տեքստ նույտքագրումից, յուրաքանչյուր էջում դուք կարող եք նաև տարատեսակ նկարներ, գրաֆիկաներ տեղադրել: Նկարների կամ գրաֆիկաների համար անհրաժեշտ է տվյալների բազայից ընտրել համապատասխան նկարը կամ գրաֆիկան և հաստատել ընտրությունը: Համապատասխան էջի վրա մուտքագրությունը կատարելու համար:

<sup>2</sup> Microsoft PowerPoint, Getting Started. Microsoft Corporation, 1994.

քագրած նկարը կարող ենք փոփոխել՝ այն համաձայնեցնելով շնորհանդեսի ընդհանուր բովանդակության հետ:

Շնորհանդեսային էջերի հետ հիմնական գործողությունները ավարտելուց հետո պետք է ընտրել շնորհանդեսի ցուցադրման այն տարրերակը, որը նախընտրում ենք: Դրա համար անհրաժեշտ է Slide Show մենյուի պահարանից ընտրել Animation Shame գործողությունը՝ շնորհանդեսի էջերի ցուցադրումը ցանկացած ձևով իրականացնելու համար<sup>3</sup>: Համակարգչային պարզագույն շնորհանդեսների էջերի հետ կապված հիմնական գործողությունների կատարումից հետո անհրաժեշտ է դրանք խմբագրել և պահպանել համակարգչում առկա համապատասխան փաթեթի մեջ՝ հետագայում ցուցադրելու համար:

Այսպիսով, պարզագույն շնորհանդեսների ստեղծումը, խմբագրումը, պահպանումը և ցուցադրումը PowerPoint ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել նրանում առկա գործառույթների ինացությամբ:

PowerPoint-ի հիմնական գործառույթներն են.

#### 1. Էջերի ստեղծում

● Շնորհանդեսի համար նախատեսված էջերի ստեղծումը հնարավորություն է տալիս իրականացնել շնորհանդեսների ստեղծումը, քանի որ դա PowerPoint-ի օգնությամբ շնորհանդեսների ստեղծման առաջին և կարևոր քայլն է հանդիսանում:

2. Շնորհանդեսի համապատասխան քանակությամբ էջերի ստեղծման, դրանց հետ համապատասխան գործողություններ իրականացնելու հնարավորություն

● PowerPoint-ը հնարավորություն է ընձեռում շնորհանդեսի էջերի միջև կապ ստեղծել, որն էլ իր հերթին հնարավորություն է ստեղծում մի քանի էջեր միավորել մեկ ընդհանուրի մեջ:

#### 3. Էջերի ներմուծում և փոփոխում

● Այս գործառույթի իրականացման համար պահանջվում է ներմուծված էջերում պարունակվող տվյալների մշակում և բաշխում:

#### 4. Շնորհանդեսի ներկայացում

● PowerPoint-ը հնարավորություն է ընձեռում ստեղծել տարատեսակ անհմացիաններ առկա տվյալների օգնությամբ:

#### 5. Շնորհանդեսների խմբագրում և պահպանում

● Սրա օգնությամբ հնարավոր է դառնում շնորհանդեսների խմբագրումը և պահպանումը:

#### 6. Տպագրման միջոցներ

● Այս ֆունկցիայի օգնությամբ PowerPoint-ը հնարավորություն է ընձեռում տպագրել գործնականորեն այն ամենը, ինչը կարելի է հանդիպել համակարգչում դրանց ցուցադրանան ժամանակ<sup>4</sup>:

Վերը նշվածները այն հիմնական և կարևոր գործողություններ են, որոնք անհրաժեշտ են PowerPoint-ի օգնությամբ պարզագույն համակարգչային շնորհանդեսների ստեղծման, խմբագրման, պահպանման և ցուցադրման համար:

<sup>3</sup> Microsoft PowerPoint, User's Guide. Microsoft Corporation, 1994.

<sup>4</sup> Microsoft PowerPoint, User's Guide. Microsoft Corporation, 1994.

Պարզագույն համակարգչային շնորհանդեսների ստեղծման, խմբագրման ընթացքում շնորհանդեսի էջերը ստեղծելուց առաջ անհրաժեշտ է սահմանել տվյալ շնորհանդեսի մեջ ներառված էջերի միջև եղած կապը այնպես, որպեսզի շնորհանդեսի ցուցադրումը լինի պելի բազմաբուվանդակ, խուսուն և փոխանցի այն հիմնական ինֆորմացիան, որն իր մեջ պարունակում է:

Համակարգչային պարզագույն շնորհանդեսների ստեղծման, խմբագրման և պահպանման ընթացքում օգտագործողը կարող է ղեկավարել նրանում առկա գործառույթները, փոփոխել դրանց ցուցադրության տարրերակը՝ այն համապատասխանեցնելով իր նախապես մշակած շնորհանդեսին:

Օգտագործելով մենյուի պահարանում առկա գործողությունները, կարելի է կենտրոնացնել շնորհանդեսը ստեղծողի ուշադրությունը այն գործողությունների վրա, որոնք տվյալ պահին անհրաժեշտ են շնորհանդեսի ստեղծման համար, քանի որ շնորհանդեսների ստեղծումը չափազանց մեծ ուշադրություն է պահանջում նար թերություններից խուսափելու համար: Այդ նպատակով PowerPoint-ը առաջարկում է գործողությունների մի ամբողջ շարք, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է տվյալ շնորհանդեսում առկա համապատասխան տարրի կառավարման համար:

Գործի դնելով մի շարք շաբլոնի ձևավորման և ցուցադրամն ընթացքում տարատեսակ էֆեկտների ներմուծման համար նախատեսված գործողությունները, հատկապես Desin Template, Custom Animation, Animation Shame գործառույթները համապատասխան տարրի կառավարման համար, կարելի է շնորհանդեսի ցուցադրումը ավելի տպավորիչ դարձնել, քանի որ այդ և նմանատիպ գործողությունները ուղղված են շնորհանդեսի համապատասխան էջի, նրանում առկա հաղորդագրության ընդգծման համար<sup>5</sup>: Գործողությունների մշակաման գործնթացը իրենից ներկայացնում է ծրագրային յուրատեսակ մի ծածկագիր, որը ի հայտ է գալիս այդ գործողությունների առաջացման ընթացքում:

PowerPoint-ը մի ծրագիր է, որի օգնությամբ, պարզագույն համակարգչային շնորհանդեսների ստեղծման ժամանակ, հնարավորություն է ընձեռվում պահել և օգտագործել այդ շնորհանդեսը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են տվյալները ներմուծվել՝ տվյալ շնորհանդեսի ստեղծման, խմբագրման և պահպանման ընթացքում:

PowerPoint-ը հնարավորություն է ընձեռում ստեղծել տարատեսակ շնորհանդեսներ PowerPoint-ի համարժեք գործողությունների օգնությամբ:

PowerPoint-ի օգնությամբ հնարավոր է նաև կապ ստեղծել շնորհանդեսների միջև, որն էլ իր հերթին հնարավորություն է ստեղծում մի քանի շնորհանդես միավորել մեկ ընդհանուր փաթեթի մեջ:

PowerPoint-ի մենյուի պահարաններում առկա գործողությունների օգտագործումը հնարավորություն է ստեղծում առավելագույնս ավտոմատացնել PowerPoint-ի շահագործման ժամանակ կրկնվելիք օպերացիաները:

PowerPoint-ի վերջին տարրերակները հնարավորություն են ստեղծում շնորհանդեսների ստեղծման, խմբագրման և պահպանման ժամանակ կրկնվելիք օպերացիաները օգտագործել համատեղման համար, որը հնարավորություն է տալիս շնորհանդեսների ստեղծման, խմբագրման, պահպանման և ցուցադրման

<sup>5</sup> Microsoft PowerPoint, User's Guide. Microsoft Corporation, 1994.

հետ կապված գործողությունները ավելի արդյունավետ և նպատակահարմար օգտագործել: Համակարգչային պարզագույն շնորհանդեսների խմբագրումից և պահպանումից հետո հնարավորություն է ստեղծվում շնորհանդեսի ցուցադրումը կազմակերպել բազմաօգտագործման միջավայրում:

Ընդհանուր առնամբ, PowerPoint-ի վերջին տարբերակում հատկապես պարզագույն համակարգչային շնորհանդեսների հետ կապված աշխատանքները և գործողությունները ավելի են կատարելագործվել<sup>6</sup>:

Microsoft office-ի ողջ փաթեթի առկայությունը նպատակահարմար է նրանց համար, ովքեր ցանկանում են ավելի մանրամասնորեն ուսումնասիրել PowerPoint-ը: Microsoft ընկերության նաև գետները փորձում են լուծում գտնել այս խնդրին՝ ստեղծելով տարատեսակ ինֆորմացիա այս համակարգը շահագործողների համար:

PowerPoint-ի ամեն նի նոր տարբերակին անցնելիս նրանում բնականաբար ի հայտ էին գալիս որոշ փոփոխություններ, որը այդ համակարգը ստեղծողներին ստիպում էր վերանայել իրենց ծրագիրը:

Այսպիսով՝ PowerPoint-ը իրենից ներկայացնում է բավականին բազմածավալուն մի համակարգչային ծրագիր, որը նախատեսված է բազմապիսի համակարգչային (ինչպես պարզագույն, այնպես էլ բարդ) շնորհանդեսների ստեղծման, խմբագրման, պահպաննան և ցուցադրման համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Григорьев С. Г., Гриншкун В. В.* Информатизация образования - новая учебная дисциплина. // В сб. Материалы XVI Международной конференции "Применение новых технологий в образовании". Троицк: МОО ФНТО "Байтик", 2005. С. 102-104.

2. *Григорьев С. Г., Гриншкун В. В.* О разработке учебника "Информатизация образования". // Вестник МГПУ. Серия информатика и информатизация образования. / М.: МГПУ, 2005, N 1 (4), С. 24-28.

3. *Григорьев С. Г., Гриншкун В. В.* Учебник - шаг на пути к системе обучения "Информатизации образования". // В сборнике научных трудов "Проблемы школьного учебника". / Научно-методическое издание. М.: ИСМО РАО, 2005. С. 219-222.

## ИСПОЛЬЗОВАНИЕ ПРОСТЕЙШИХ КОМПЬЮТЕРНЫХ ТЕХНОЛОГИЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

**М. З. АКОБЯН  
П. Г. БАГДОЯН**

В статье представлена необходимость применения компьютерной программы PowerPoint в различных компьютерных программах для создания, редактирования, хранения и демонстрирования простейших и сложных презентаций.

<sup>6</sup> Microsoft PowerPoint, Getting Started. Microsoft Corporation, 1994.

## OF THE SIMPLEST COMPUTER TECHNOLOGIES DURING TRAINING

M. Z. HAKOBYAN  
SH. G BAGHDOYAN

The article introduces the necessity of using the computer program of PowerPoint to create, edit, save and show the simplest as well as the complicated computer presentations.

# СТРУКТУРИРОВАНИЕ ВОЛОКОН НА ОСНОВЕ СОПОЛИМЕРОВ АКРИЛОНИТРИЛА С СОРБИНОВОЙ КИСЛОТОЙ И ИЗУЧЕНИЕ ИХ СВОЙСТВ

А. П. ОГАНЕСЯН

*Доцент кафедры технологий и естественных наук ГЭУ*

Э. М. ГЕВОРГЯН

*Магистр академии наук Армении*

М. А. ГЕВОРГЯН

*Доцент кафедры общей физики АГПУ им. Х. Абовяна, канд. тех. наук*

Образование межмолекулярных химических связей является одним из наиболее перспективных методов позволяющих направлению изменять свойства текстильных волокон. Сшивание полимеров в отличие от процесса структурирования происходящего при старении и термодеструкции, является регулируемым процессом и играет важную роль в технологии получения материалов с заданной структурой и свойствами.

Сшивание ПАН волокон, как правило происходит в результате химических реакций функциональных групп, специально введенных в макромолекулу сополимера.

Процесс спшивания проводится обычно на готовых волокнах путем обработки их растворами спивающего агента. Наиболее перспективным является метод, когда спшивание волокна осуществляется на различных стадиях технологического процесса его получения. С этой точки зрения, большое внимание заслуживает формование волокон из растворов, в состав которых введены спивающие агенты и дальнейшая спивка полученных волокон при повышенной температуре.

Сополимеры акрилонитрила, содержащие звенья сорбиновой кислоты, являются системами, удовлетворяющими этим требованиям.

Наличие двойных связей и реакционноспособной карбоксильной группы в макромолекуле сополимера АН с СК позволяет использовать для спшивания волокон на их основе соединения, обычно применяемые для вулканизации каучуков.

Для спшивания модифицированных волокон, содержащих 3,1-16,0 мол. % СК нами были использованы серосодержащий ускоритель - тетраметилтиурамдисульфид (тиурам-Д).

При изучении возможности структурирования волокон ускорители вводились не-